«ԳՈՒՅՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԽՄԲԱԿ «ԿԵՐՊԱՐԿԵՍՏ»

ԱՌԱՐԿԱՅԻՑ ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

2023-2024 ուստարի

Հեղինակ՝ Իսկուհի Մինասյան

Խ. Աբովյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

1. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ----------4

2. ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎՈՂ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺԱՄԱՔԱՆԱԿԱԸ----------5-6

3. ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ----------7

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր երեխա նկարիչ է, դժվարությունը նկարիչ մնալն է՝ դուրս գալ մանկական հասակ

Պաբլո Պիկա

Կերպարվեստը տարածական արվեստների մի բաժին է, որը միավորում գեղանկարչությունը, քանդակագործությունը, գրաֆիկան, դեկորատիվ-կիրառական արվեստը: Ի տարբերություն տարածական արվեստների ոչ պատկերային տարատեսակների կերպարվեստը արտացոլում է իրականությունը և տարածության մեջ ստեղծում դիտարկելի, ակներև կերպարներ: Ժամանակակից հանրակրթական դպրոցի յուրաքանչյուր ուսումնական բնագավառում ուսումնական գործունեության տեսակներ նախագծելիս պետք է նկատի ունենալ ոչ միայն տվյալ առարկայի գծով գիտելիքների հաղորդման, այլև սովորողի մեջ նշված հատկանիշների ձևավորման և զարգացման անհրաժեշտությունը: Իր ուրահատկության, բովանդակության, ինչպես նաև ուսումնական բոլոր առարկաների հետ փոխադարձ կապ ստեղծելու բացառիկ հնարավորության շնորհիվ Կերպարվեստը կոչված է խթանելու սովորողների մտավոր և հոգևոր ներուժի բացահայտումը, զարգացումը և հարստացումը, ընդհանուր աշխարհայացքի ձևավորումը:

Սույն խմբակի ծրագիրը կազմվել է նպաստելու սովորողների՝

- Իրականության գիտակցական և զգայական ընկալման ձևավորմանը
- Վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը.
- Անձի ինքնաճանաչմանը, ինքնաարտահայտմանը և մտահորիզոնի ընդլայնմանը.
- Սովորողների գեղարվեստական կրթությանը, գեղագիտական և բարոյական դաստիարակությանը.
- Ազգային-հայրենասիրական և մարդասիրական զգացումների արթնացմանը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Սովորողներին ծանոթացնել առարկայի պահանջներին:
- Նպաստել սեփական մտահղացմամբ, նախաձեռնությամբ, ստեղծագործել և ինքնուրույն ստեղծել ինչ-որ բան.
- Սովորեցնել մտածել, վերլուծել, առաջադրել նոր մտահաղացումներ, ստեղծագործաբար մոտենալ բոլոր առաջադրանքների կատարմանը, գնահատել գեղեցիկը:
- Աշակերտներին օգնել համակարգելու և կիրառելու ձեռք բերած գիտելիքները:
- Կարողանա վերլուծել և գտնել արվեստի տարբեր տեսակների յուրահատկությունները,նրանց միջև գոյություն ունեցող ընդհանրությունները:
- Ծանոթ լինի իր ժողովրդի և ազգային այլ մշակույթների ավանդական արվեստի ստեղծագործությունները:
- Իմանա ներկման նշանակությունը և ձևերը:
- Ծանոթ լինի հայկական կերպարվեստիդերը ինչպես ազգային, այնպես էլ համաշխարհային մշակույթի շրջանակներում:
- Արտահայտել և հիմնավորել իր վերաբերմունքը կերպարվեստի ստեղծագործության վերաբերյալ:
- Զարգացնել տարածական պատկերացումներ և ճանաչողական հմտություններ: Սովորեցնել դեկերատիվ մտածելակերպ
- Փորձի ներկայացնել տարածոիթյան պատկերման հիմունքները՝ հեռանկար,հեռավորության վրա օբյեկտների փոքրացում:
- Ներկայացնել արվեստի ստեղծագործությունները, դրանց առանձնահատկությունները:

Դասի ընթացքում կիրառվում է

1. Պատկերում բնօրինակից:
2. Թեմատիկ նկարչություն:
3. Դեկորատիվ կիրառական արվեստ:
4. Զրույցներ:

1. Թեմաները կարելի է նկարել.

ա) հիշողությամբ

բ) պատկերացնելով

գ) երևակայությամբ

2. Պարապմունքները զարգացնում են

ա) հիշողությունը

բ) երևակայությունը

գ) ստեղծագործական միտքը

դ) դիտողական հիշողությունը

ե) սեր դեպի արվեստը:

3. Նկարել սիրող աշակերտների համար ինքնուրույն ստեղծագործելը, ազատ աշխատանքը միտքը դարձնում է ճկուն: Թեմատիկ նկարչության մեջ նպատակը ստեղծագործական մտքի ընդլայնումն է, անսահման երևակայությունը:

4. Դեկորատիվ կիրառական արվեստը.

ա) Անչափ հետաքրքիր է: Այն զարգացնում է ճաշակը, հորինելու, մտածելու, ստեղծագործելու ունակությունը:

բ) Այս դասի տեսակը ջատ կիրառական է, և թույլ է տալիս անվերջ ստեղծագործել, մտածել, շարժել միտքը:

գ) Կարելի է զարգացնել ձեռքի հմտությունները:

5. Իսկ զրույցները աշակերտների հետ արվեստագետների մասին, թույլ է տալիս ձեռք բերել տեղեկություններ նրանց մասին:

Ընտրովի թեմաներ

1. Մեր գյուղը
2. Սպորտային թեմաներ
3. Աշուն
4. Զկնորսություն
5. Ազատ ստեղծագործ. Աշխ.
6. Բնանկարներ
7. Նատյուրմորտներ
8. Նկարել թղթե ափսեների մեջ (ձևավորում)
9. Ձմեռային թեմաներ (պատկերներ)
10. Գարնանային օրեր և այլն (ըստ երեխաների ցանկության)

Խմբակին տրամադրվել է 4 ժամ		
Օրեր	Ժամ	Դասաժամ
Երկուշաբթի	14:05	2դ/ժամ
Հինգշաբթի	14:05	2դ/ժամ

Արտադասարանական խմբակի նախատեսված է ուսումնական մեկ տարվա համար: Սովորողներն ամբողջ տարվա ընթացքում կհարստացնեն իրենց տեսական գիտելիքները շտեմարանը, գործնականում դրանք կկիրառեն իրենց ստեղծագործական աշխատանքներում: Այցելություններ կունենան թանգարաններ, որտեղ բացի ընդհանուր ծանոթությունից և տեսական գիտելիքներից, նաև կմասնակցեն կրթական ծրագրերի: Կծանոթանան մարզի հուշակոթող-համալիրների հետ, տեղում կանցկացնեն պլեներային դասեր: Տարվա ընթացքում սովորողները կմասնակցեն ընթացիկ և ավարտական ցուցահանդեսների, կկազմակերպվեն քննարկումներ:

ԳՈՒՅՆԵՐԻ
ԱԾԽԱՌՈՒՄ
«.....» խմբակի

ԾՐԱԳԻՐ

(շաբաթական՝ 4. ժամ, տարեկան՝ 136 ժամ)

Գունանկար (15 ժամ)
Նպատակը
Պատկերվող առարկաների գունային կառուցվածքի, ձևի, ծավալի հեռանկարչական կրճատումների, լուսաստվերների, երանգների ինքնուրույն վերլուծման և պատկերման կարողությունների զարգացում:
Խնդիրներ
Ընկալել պատկերվող օբյեկտների ձևը, կառուցվածքը, ծավալը, գույնը, ֆակտուրան, լուսաստվերը, տարածական դիրքը և փոխհարաբերությունները և հեռանկարչական կրճատումները:
Վերջնարդյունքներ
Ներկայացնել գույնի միջոցով առարկաների տարածական պատկերման հիմունքները (հեռանկար, հեռավարության վրա օբյեկտների փոքրացում, կրճատում, հորիզոնի գիծ):
Բովանդակություն
1. ..... 2. ..... 3. .....:

Գծանկար (15 ժամ)
Նպատակը
Ապահովել համապատասխան միաջավայր իրատեսական, վերացական և երևակայական աշխատանքներ ստեղծելու համար: *Համաչափության կանոնների վերարտադրման կարողությունների ձևավորում* *Առարկաները զննելու, չափելու և պատկերելու կարողության ձևավորում*
Խնդիրներ
Կոմպոզիցիոն կենտրոնի ընդգծում, լույսի և ստվերի միջոցով գլխավոր հակադրումը երկրորդականին: *Գծանկարում կիրառվող նյութերի և միջոցների փորձարկում:* *Հեպանկարների կատարում:*
Վերջնարդյունքներ
Ներկաբացնել գծի միջոցով առարկաների տարածական պատկերման հիմունքները (հեռանկար, հեռավարության վրա օբյեկտների փոքրացում, կրճատում, հորիզոնի գիծ):
Բովանդակություն
1. ..... 2. ..... 3. ..... 4. ..... 5. .....

Կոմպոզիցիա (12. ժամ)
Նպատակը
Կոմպոզիցիայի հիմնական միջոցների և հնարքների, գեղարվեստական ոճաձևերի ստեղծագործաբար կիրառման կարողությունների ձևավորում: *Կոմպոզիցիայի տարրերի համաձայնեցվածության, կոմպոզիցիոն կենտրոնի շեշտադրման ուսուցում:*
Խնդիրներ
«Կոմպոզիցիա» հասկացության լայն ըմբռնումը, որպես ստեղծագործության, թեմայի գեղարվեստական նյութի, ձևի և կատարման տեխնիկական հնարքների ամբողջություն: *Կոմպոզիցիոն աշխատանքների կատարում, թեմատիկ աշխատանքների շարքի ընտրություն, կատարում և ցուցադրություն:* *Գաղափարի դուրս բերում, կենտրոնի ընդգծում լույսի և գույնի միջոցով, գլխավոր հակադրումը երկրորդականին:*
Վերջնարդյունքներ
Տարբերի նյութերի մշակման և դրանցով աշխատելու հնարքները: *Սեփական աշխատանքում կիրառել պատկերման տարբեր տեխնիկաներ և հնարներ:* *Ներկայացնել հիմնական գաղափարը:* *Տարբեր գեղարվեստական հնարքների միջոցով ընդգծել ասելիքը:*
Բովանդակություն
1. ..... 2. ..... 3. .....

Պլեներ (Էտյուդ) (.....5..... ժամ)
Նպատակը
Բնության նկատմամբ սիրո և հոգատար վերաբերմունքի դաստիարակում: *Գույնի, երանգի, ռիթմի և ձևի հատկությունների օգնությամբ տրամադրություն և իրավիճակի արտահայտման կարողությունների ձևավորում:*
Խնդիրներ
Պատկերվող առարկաների գունային կառուցվածքի, ձևի, ծավալի, հեռանկարչկան կրճատումների, լուսաստվերի, երանգների ինքնուրույն վերլուծման և պատկերման աշխատանքներ:
Վերջնարդյունքներ
Կատարված դիտումների և ուսումնասիրությունների հիման վրա, բնօրինակից կամ հիշողությամբ պատկերել բնության տեսարաններ:
Բովանդակություն
1. ..... 2. ..... 3. .....

Զարդանկար (Հ. ժամ)
Նպատակը
Ծանոթացնել՝ – *զարդանախշի ծագման և հետագա զարգացման պատմությանը,* – *տարբեր ազգերի կերպարվեստում և ճարտարապետության մեջ, զարդանախշի բազմաթիվ տեսակների, և դրանց օգտագործմանը:*
Խնդիրներ
Նկարազարդման և պատկերազարդման առանձնահատկությունների ուսումնասիրություն, և կիրառում աշխատանքներում:
Վերջնարդյունքներ
Աշխատանքներում ներկայացնել այն նյութերն ու տեխնիկական միջոցները, որոնք օգտագործվում են նկարազարդումների ժամանակ:
Բովանդակություն
1. ..... 2. ..... 3. .....

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Կերպարվեստ» առարկայի արտադասարանական խմբակի նպատակն է ապահովել սովորողների կերպարվեստային գործունեությամբ և ստեղծագործական աշխատանքով զբաղվելու շարունակականությունը, ինչպես նաև լրացնել և ամբողջացնել առարկայական ծրագրի իրականացումը «5»- «6»-րդ դասարաններում:

Խմբակի ծրագիրը ներկայացված է աղյուսակի տեսքով: Յուրաքանչյուր բաժնի համար ներկայացված են՝

1. Թեմայի անվանումը, ժամաքանակը:
2. Նպատակները:
3. Խնդիրները:
4. Վերջնարդյունքները:
5. Բովանդակությունը:

Ծրագրում առանձնացված են այն թեմաները, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրություններին հետաքրքրություններին ու պահանջմունքների բավարարմանը՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների, կարողունակությունների ու հմտությունների զարգացման վրա:

ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սույն խմբակի ծրագիրը կնպաստի գիտելիքների, հմտությունների, արժեքների և դիրքորոշման ձևավորմանը՝ հետևյալ վերջնարդյունքների տեսքով.

ՍՈՎՈՐՈՂԸ ԿԻՄԱՆԱ՝

- Կոմպոզիցիան կառուցել ճիշտ,լուծել խնդիրներ:
- Պլանավորել աշխատանք:
- Պետք է կարողանա գույների միջոցով տրամադրություն հաղորդել:
- Ստեղծել ֆիգուրային կոմպոզիցիա:
  Տիրապետել համաչափությունների օրենքներին և գունատեսության օրենքներին:
- Կենդանիների և մարդու մարմնաևի բնօրինաիկից նկարելու կարողություն:
- Տարբերակել կերպարվեստի տեսակները և արտահայտչամիջոցները:
- Ճիշտ օգտագործել իրեն անծանոթ արվեստագիտական տերմինները:
- Փոքր խմբերի միջավայրում հարցեր ուղղել և պատասխանել հարցերին:
- Մասնակցել միջավայրի գեղագիտական ձևավորումներին:
- Իմանան զարդանախշի ստեղծումը և նշանակությունը, նաև կիրառումը:
- Դրսևորի գեղեցիկը ընկալելու ձգտում: պատրաստել փայտյա իրեր:
- Հաղթահարել դժվարությունները և բարելավել սեփական արդյունքները:
- Ճիշտ օգտագործել իրեն անծանոթ արվեստագիտական տերմինները:
- Ծանոթ լինի գեղարվեստական իրերի և դրանց ձևերի կապը զարդանկարային մոտիվի կատարման հետ:
- Վերլուծել, սեփական կարծիք հայտնել:
- Իմանան գծերի տեսակների մասին:
- Նախապատրաստել աշխատատեղը:
- Կատարի նատյուրմորտների նկարում բնօրինակից,դրանք բաղկացած են կենցաղի 2-3 առարկայիցհավասարապես ներկված գիպսե սկահակներից,բանջարեղենից,մրգերից,զարդարուն ֆոնից:
- Ըստ առաջարկված թեմայի ստեղծել ավարտուն կոմպոզիցիոն աշխատանք: